

Տարեկան գինն է 10 ռուբլի:
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.:
Առանձին համարներով իրարանջարը 5 կոպեկ:
Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակի և տոն օրերից
առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետ:
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւ
նալ հասցեով. — Въ ред. газетъ «Мегу Хаѣстанъ», въ Тиф-
лисѣ, къ Redaction de «Meghou Haïastani», à Tiflis.
(Caucase).



Խմբագրութեանս ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները
պէտք է պարզ դրուած լինին զորոյ ստորագրութեամբ եւ հասցեով:
Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուած-
ները: Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յո-
լուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցրտանալը:
Յայտարարութիւններ խմբագրութեան ամեն մի բառին 2 կոպե:
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:
Յայտարարութիւններ ընդունվում են խմբագրատունը, սկզբնապէս
հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփիանի ծխախոտի խանութում են
պ. Շահմիրզայանի պալիկիւնում:

«ՄԱՆ ԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋ»
ԱՆԷՔՈՒՆԵՐՈՐԴՏԱՐԻ
Երկու տարի շարունակ պարապե-
լով տ. Ս. Բաբայանցի «Մանկական
Պարապելոյ» ք., պարտիզպանութեան
պաշտօնով հոգեւոր իշխանութեան
թղթուղթեմամբ, հոգեւոր իշխանութեան
հետեւում եմ «Մանկական Պարապելոյ»
ստորագրութեամբ 4—6 տարեկան երե-
խաների համար, երկու տարուան դա-
ւանքով հասցեով: Ցանկացողները իրանց
մանկաներին Մանկական պարտիզ-
պաններով պայմաններին մասին կա-
րող են տեղեկանալ պ. Մակար Տէր-
Սարգսեանից իւր տան մէջ ամեն
օր, բացի տոն օրերից ձաշից յետոյ
4—6 ժամը:

Տիկին Նատալիա Տէր-Մարտիրոսեանց:
Խմբագրութիւնս խնդրում
է այն բաժանորդներին, որոնք
գեւ. ևս չեն վճարած լրագ-
րիս տարեկան բաժանորդ-
դաւիտը, շտապէն փութով
հասցնել ա յ ն խմբագրու-
թեանս:

ԲՈՎԱԿԱՆԱԿՈՒԹԻՒՆ.
Մի անհայտ կրօնի վերայ. — Պարզա-
բանութիւն:
Ներքին Տեսութիւն. — Համա-
պարզութեան նկատառութիւններ:
Քաղաքական. — Քաղաքական
լուրեր:
Մանր լուրեր:
Խառն լուրեր:
Յայտարարութիւններ:
Ֆէլիէ տօն:

ՖԵԼԻԵՏՈՆ
Լինում են մարդու կեանքում այն-
պիսի բոլորքներ, որոնք չեն իմանում
ծիծաղել, թէ լայնակալից իսկ կարծում
եմ, որ ամեն մարդու այսպիսի բոլորքներ
պատճառում են և նորա մեր շուրջը կա-
տարվող երեւոյթներից առաջանում են:
Տեսնում են շատ անգամ մարդիկ, որոնք
կարծես գիտութեամբ իրանց սող գլուխ-
ները աւետարանի տակ են դնում և
յետոյ փոշիմանում ու վայ տալիս—լայ
լինում—ահա այսպիսի երեւոյթները մեծ
մասամբ մարդու մէջ յաճախ թէ ծի-
ծաղի և թէ կարեկցութեան զգացմունք-
ները մի և նոյն ժամանակ զարթում են
—ծիծաղեցնում են և լայնացնում կամ ան-
որոշ և տարտամ վիճակի մէջ դնում,
մարդու երկու կրակի մէջ գցում, այն-
պէս որ նա համ ծիծաղել համ լայ է
ուզում և ոչ մէկը չէ կարողանում—մի
տեսակ տխուր թմրութեան մէջ է ըն-
կղծում, ինձ յաճախ է այս դրութիւնը
պատահում, երբ մեր հայերիս ներկայ
գործերն են յիշում, նոցա վերայ եմ
մտածում և խորհում, որովհետեւ այնպի-
սի բաղաձիւղ երեւոյթներ եմ տեսնում,
անխորհուրդ գործեր, անմիտ յափշտա-
կութիւններ եմ նկատում, աննպատակ
ձգտումներ և սպարդիւն ճիգ ու բարո-
յական և նիւթական ծախքեր են աչքիս
ընկնում, որ ակամայ ծիծաղ և ցաւ են

ԹԻՖԼԻՍ 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1884 թ.
ՄԻ ԱԿՆԱՐԿ ԿՐՈՆԻ ՎԵՐԱՑ.
III
Մենք մեր անցեալ յօդուածում
ցոյց տուինք թէ ինչ նշանակու-
թիւն ունեցել են կրօնն ու կրօնա-
կան սրբավայրերն և հաստատու-
թիւնը ազգերի բարոյական ու մը-
տաւորական կեանքի և նոցա ազ-
գայնութեան պահպանութեան հա-
մար: Նոյն երեւոյթը տեսնում ենք
մենք և քրիստոնէական կրօնի և
քրիստոնէական զանազան եկեղեցեաց
և սոցա հաստատութեանց վերաբե-
րութեամբ: Քրիստոնէական եկեղե-
ցիք, իրանց վարդապետութեան
ձգնարութեամբ, աւելի զօրեղ են
գտանված, քան կուսակալական կր-
օնական հաստատութիւնը: Քրիս-
տոնէական եկեղեցու բարոյական ու-
ժըն այնքան մեծ է եղած, վարդա-
պետութեան ձգնարութեամբ, որ
նա մինչև անգամ ազգեր ձուլած է
մոռացնել տալով այն ցեղական
տարրերն, որոնք բաժանում էին
նրանց: Բայց և՛ ամենազօրեղ կեր-
պով պահպանել է այն ազգերի գո-
յութիւնն, որոնք ի սկզբանէ կազ-
մէն իրանց համար առանձին ազ-
գայն եկեղեցի, հիմնված աւետա-
րանի վարդապետութեան և ազգա-
յին առանձնայատկութեանց վերայ:
Ահա այսպիսի եկեղեցիներին է և

մարդու մէջ յարուցանում և միթէ այս
չէ պատճառը, որ մենք սովորաբար մեր
ամեն գործերի մասին և ամեն տեղերից
միայն զանգատ ենք լսում, արածներին
վերայ փոշիմանում—լայ լինում և այս
իրաւամբ ենք անում, մեր բնազդովն
հետեւում:
Ամենքն և ամեն կողմից զանգատում
ենք և բնաւ այդ ծաղալի և ցաւալի
վիճակի պատճառները հետազոտելու
ճգնում և ցանկանում չենք: Սրանից է
հենց մեր ամենամեծ գիշարութիւնը և
մեր գործերի անյաջողութիւնը:
Ղիտես, ընթերցող, ինչիցն է մեր այս
գիշարակ վիճակը, ինչու մեր կեանքն
խակապէս է կեանքի խրտուրդակ և չունի
բնական զիւրք ու վիճակ:
— Նրանից է այս, որ մենք մեր
կեանքի ճիւղերն չենք կենդանացնում
իրանց մէջ, չենք մասնաւորում իւրա-
քանչիւր ճիւղ և սրան անկախ և ա-
ռանձին չենք թող տալիս զարգանալու
կամ նրան այդպէս լինելու միջոց չենք
տալիս կամ սահմանափակում նրանց,
որ նորա աճողական ուժը չը թլնայ
սահմանից դուրս գալով և ոչ էլ արտա-
քին ազդեցութիւն չը խանգարէ նրա
կանոնաւորութիւնը, օտար նիւթ և տարր
նորա մէջ մտցնելով:
Օրինակներով միտքս պարզեմ, որով
անշուշտ աւելի ասածներս հասկանալի
կանեմ և կը յուսամ, որ ընթերցողս
ասածիս մէջ ձգնարութիւն կը տեսնի

հաստան, եւրօպայի զանազան երկր-
ներ— զոքա այդ բնկորները պահ-
պանութեան իբրեւ հայ հասարա-
կութիւնը, քանի որ նոքա հայ ե-
կեղեցու անդամք էին ևս. Եջմիածին
և այլ իրանց սրբութիւնքը յիշում
ձանաշում էին լինելով քաղաքա-
կանապէս զանազան տեղութեանց
անդամ և մինչև իսկ օտարախօսը:
Բայց զոքա յայտնի լսան է այն-
քան նուազ և թղլէին, որ վաղ
թէ ուշ պիտի ենթարկէին չըջա-
պատող զօրեղ տարրերի ազ-
դեցութեան և իբրեւ կաթիլներ
անհետանային օվկիանոսի մէջ, ինչ-
պէս և եղաւ, համաձայն բնական
օրէնքներին:
Ծառից ընկած տերևը պիտի չը-
րանայ, նոքա էլ անջատվելով հայ
եկեղեցուց, չըջապատող մեծ ուժե-
րի զօրութեամբ, չորացան— անհե-
տացան, իբրեւ հայեր: Նոքա մի քա-
նի սերունդը դիմացան, որքան զեւ.
ևս հայ եկեղեցուց տուած բարոյա-
կան ուժը փոքր առ փոքր նուազե-
լով անցնում էր ժառանգութեամբ
սերնդից սերունդ:
Մտկայում յիշում ենք մի ծե-
րունի, յոյժ բարեպաշտ, հայի, որ
ամեն տեղական ուխտատեղիներին էլ
այցելում էր: Մի վանքի ուսու վար-
դապետներ տեսնելով այս անձին
ձերմեռանդութիւնը, մտածեցին նը-
րան հաւատալով անհի և սկսան
համոզել, լայց այսպիսի արտասխան
ստացան, զորք սրբերն էլ լաւ են,
մեն հաստատութեան կեանքի զարգա-
ցումն կախված է ոչ թէ նորա մէջ զօր-
ծողների ձեւաւոր յարաբերութեանց հա-
տատ պահպանելից, այլ նոցա համերա-
խութիւնից գործողութեան մէջ, որ նա-
յում է զէպի այդ հաստատութեան
կեանքի զարգացումն: Որ հաստատու-
թեանում սորա անդամներին մէջ համա-
բաշխութիւն չը կայ—այնտեղ կեանք
չը կայ, թէ դուք հաղարար յօդուած-
ներից բաղկացած կանոնադրութիւնը
զրկվի նորա համար և մանրամասնաբար
որոշվի այդ անդամների պարտականու-
թիւնքն ու իրաւունքները: Եւ չեմ ա-
նուամ, որ հաստատութեան իւրաքանչիւր
անդամի պարտքն ու իրաւունքը յայտ-
նի չը լինին, ոչ, միայն նոցա կատարու-
մէն լինի ոչ թէ կանոնադրութեան ըս-
տիպմամբ, այլ համերաշխութիւնից և
պարտաճանաչութիւնից յօդուած հաստա-
տութեան:
Մեր զարգացնում հոգաբարձուք իշ-
խող են տեսի վերայ, տեսուչը ուսու-
ցիչներին վերայ, ուսուցիչները աշակերտ-
ների վերայ—ատրիճանաբար մէկը մի-
սի վերաբերութեամբ մի տեսակ լոկ
ստորագրեալ—ստրկի դեր է խաղում,
լայց այս վիճակը ոչ ոքին հաճելի չէ,
ուստի և տեսուչը ձգտում է, խորհում
է մտածում է իւր լուծ թիւթեցնելու,
ուսուցիչն իւրը, աշակերտն էլ մտածում
է նոյնը: Արդա կարծես իրար խորթ
տարրեր են, որոց մի արտաքին ոյժ,

սովորութիւն, կամ մի անորոշ ցանկու-
թիւն փակել է չորս պատերի մէջ իրար
չը հասկանալու, իրար հետ չապրելու և
մի նպատակով չը գործելու համար:
Բայց մարդ կենդանի է, ապրել է ու-
զում, կեանք է որոնում, ուստի և հայ
հոգաբարձուն, ուսուցիչը, աշակերտը—
զարգացող դուրս է կեանք որոնում, հա-
տարակութեան կեանքով է ապրում, աշ-
խարհի կեանքով է ապրում և այդ հա-
տարակական կեանքի տարրերն էլ զրգ-
լոց է մտցնում իւր հետ, զարգում
զարգել կեանքը միայն չէ կանոնում նո-
րա ուղարկութիւնն ու մտաւոր կարո-
ղութիւնը, այլ նա զարգի մէջ թէ հո
զարգում սորա անդամներին և թէ
հասարակութեան անդամ է իբրեւ
քաղաքագէտ, իբրեւ հրապարակախօս,
իբրեւ քննիչ և գնահատիչ ամեն տեսակի
և գաղափարի կեանքի, ամեն գործիչի:
Եւ իբրեւ այսպիսի անձն նա իւր յարա-
բերութիւնքն որոշում է զարգացում սրա
մէջ գործող անձնաւորութեանց հետ—
այստեղից ծագում է ոչ-համերաշխու-
թիւնը, առանց որոյ ոչ մի հաստատու-
թիւն յաջողութիւն և յառաջադիմու-
թիւն չէ կարող ունենալ:
Շատ անգամ զրեւ են և մինչև իսկ
կատակի հանել գերմանական զարգեցե-
րի կեանքն, իբրեւ սահմանափակ, իբրեւ
մի տեսակ գաղափարական (կատաւ)
կեանք, որ իւր չըջանից դուրս չէ գա-
լիս, իւր մէջ կենդանացած է, կարծես

բաժանօթ գաղանազուսայ փէնէն անուն անձը պատահեց Հոռոմի մէջ:

Յակոբի վրայ մանրամասն տեղեկութիւններ չունինք, սակայն կ'իմանանք թէ Մարաշի յաղթանակում կարծիք մ'է խաչատուր Շահինեան անուամբ եղբայր մը ունի ի Մարաշ:

Յակոբի վրայ մեր ընթերցողաց այսքան ծանօթութիւն մը տալէ ետեւ, նոյնութեամբ կը թարգմանենք նաեւ Սէնթ Էթիէնի մէջ ճարտարակազմի ճիւղի փոխադէն տը լա լուաւ: լրագրացն ճարտարական ճիւղի մէջ, որ խիստ հետաքրքրական և միանգամայն ցաւալի է:

«Ներէկ իրիկուն (23 յուլիս) փչած փոթորկալից բուռն հողմին ազդեցութեանէն, Քալիի գաղապեղին առիւծներն ու վագրերը գրգռելով կատաղած էին: Բայց հակառակ այս վիճակին, Նոռմա Հոռոմ» ժամը իննին առիւծաց գառազեղը մը տաւ: Նախ ամեն ինչ աղէկ գնաց, բայց Սուլթան (ամեն ոք գիտէ թէ առիւծին անունն է այս) հուզելով մատակ առիւծին հետեւէ՝ թղթեայ չըջանակաց մէջ տեղէն ցատկելու կրթութեան, խարազանի հարուածներ ստացաւ, որով ստակալի կերպով սպաննալից կերպարան մ'առաւ: Ուստի այս վերջինն զգալով անհուշտ որ իր յամառութիւնը գէշ հետեւանք պիտի ունենայ, ուղեց և կրցաւ ողջ ամբողջ մենիկը գառազեղէն:

Սակայն այսպէս չեղաւ գաղանազուսայ Ակորին (Յակոբ) համար, որուն ծայրայեղ յանդգնութիւնը կը գովէինք երէկ: Հազիւ թէ մտաւ Յակոբի խնայողական գառազեղին մէջ, ուր կը գտնուէր իր ստակալի Ներոն վագրը, այս վերջինը վըտանգաւոր կերպով կրկնապատնար Յակոբին, կատարելով համանգամայն իր հասարակ կրթութիւնները:

Այս վայրկեանէս սկսեալ հասարակութիւնը, որ խիստ յուզուած և սրտազոյի մէջ էր, կանխազգալով թէ արիւնուռտ տեսարան մը տեղի պիտի ունենայ, սկսաւ դռնէլ: «Ներքէ է, հերքէ է»:

Յայնժամ հասարակութիւնն անպատմելի սարսափի վայրկեան մ'առնեցաւ: Ահա զգալան յանկարծ ի մի ցայտ աբխաթի Յակոբին վրայ սլացաւ, իր ստակալի և դրեղ ճանկերն անոր կուրծքին ու բազուկներուն մէջ մինչ, մինչ միւս կողման իր զարհուրելի ծնօտին մէկ հարուածով նորա ձախ ձեռքը պատահեց:

Ամեն կուրծքէ սարսափի ազդակ մը բրկաւ իսկոյն, ամեն ոք կարծեց թէ կորսուած է թշուառ Ակորը: Բայց սա (Յակոբը), որ Հերակլեան ոյժով մը օժտեալ հազուագիւտ գաղանազուսայ մ'է, իր պաղարկները պահելով, երկու հոգիու բազուկներով բռնեց կատաղի վագրին իրանէն և նետելով ի գետին տապալեց, յետոյ խարազանն առնելով սկսաւ հարուածել և, ու գերազոյն արիւնքութեան, ստակաց վայրագ գաղանկին, որ կատաղաբար կըմռնէր, շարունակել իր հիւնալի ցայտերը՝ չըջափակին վրայ:

Եւ Ակոր լուրջովին արիւնաթաթաւ ելաւ այն տանն գառազեղէն, վերաւոր, բայց յաղթող և ժպտերես:

Այս ամենը (տեսնեք մենք, մեր աչքով, վասն զի ներկայ էինք տեսարանին) այնքան քիչ ատենի մէջ կատարուեցաւ, որքան զայն գրեւոր համար ժամանակ պէտք է, և մինչդեռ հանդիսատեսները կը զողային տակաւին՝ մըտածելով այն վտանգը որմէ մագաղապը պրծաւ Յակոբը, սա՛ այս յանդուրժ Ասիացին՝ ձեռքերն արիւնաթաթաւ և զուրկ երեքժանին բռնելու ոյժէ, զարձեալ բուրդովին զինամալի, հակառակ հասարակութեան բուռն բողբոջանաց, մատակ առիւծին գառազեղը կը մանկէր, այն

1) Կը կարծենք թէ Նոռմա Հոռոմ վերջիկեալ մատակ առիւծին անունն է. Ծ. Արշ.

առիւծին որմէնչպէս երէկ ըսինք երկու տարի առաջ գաղանազուսայ փէնէն պատահեց Հոռոմի մէջ:

Այս գործողութիւնը յանդգնութեան և արիւնքութեան վերջին ծայրն է պարզապէս: Հիմալի է այս, և այսօր Ակորը կրնայ բարձրաձայն պահանջել աշխարհի միակ և առաջին գաղանազուսայի տիտղոսը:

Սակայն հասարակութիւնն յամբար կը ցրուի և քանի մ'անձինք, մասամբ իրենց սրտազոյնը գերծնալ, կրնան շարունակեց իր աշխատութիւնները թեթեւ կերպով վերադարձաւ ըլլալու է: Այն ատեն մատղիցները և զեղեղներն ստուգել ամեն կերպով որպէս զի կարող ըլլանք լաւ տեղեկութիւն տալ մեր ընթերցողաց:

Այն օթեակին մէջ, ուր Պ. Տրեթոր Պեղակէ՝ Ակորին վերցրելը կը քննէր, քիչ մ'առաջ միւր տեսած տեսարանին չափ սրտայայտ տեսարանի մը ներկայ գտնուեցանք:

Տանեկինք լայն վէրքեր, 15 ստակալի պատահուածներ գաղանազուսային բազուկները, ձեռքերը և կուրծքը կը ծածկէին:

Եւ մինչդեռ բոլորը պատահուած միտերուն կտորները կը կտրէ, վէրքին մէջ, երկաթեայ ձող կը խօթէ և միտմով վէրքերը կը կտրէ, բոլոր այս գործողութեանց տեսողութեան միջոցին կը սենք, որ երբ քառորդ ժամ տեւեց, Ակորը կը ժպտի որպէս իր կինը՝ որիւրէն չը խռովի:

«Կրնաք պարծիլ թէ գերազոյն արիւնքութիւն մ'ունիք» կ'ըսէր անոր տղը՝ թոր Պէղակէ, իր գործը լրացնելէ ետեւ փութանք յաւելու թէ, որքան բարեբաղդ նոյնքան արտասովոր պիտուածով մը, աներկելի և արիւնքալի նուաճիչը մի միայն քանի մ'օրվան բռնի հանդիսով մը պիտի ազատի իր վէրքերը թէ և լայն և խորին են բայց որ և է կենսական գործարանի մը հասած չին: Աւելորդ է ըսել թէ մասնաւորապէս մեք ևս բարեբաղդ ենք այսպէս ըլլալուն:

Յ. Գ. Այս տառա (24 յուլիս) վերաւորին վիճակին վրայ տեղեկութիւններ ստանալու համար մարդ զրկեցինք, և խմացանք թէ խիստ կը տառապի և աջ բազուկը շատ ուռնեցած է: Կը յուսացուի սակայն որ ծանր հետեւներն չը ծագին: (Արշ. Արարաւս.)

Խմբագիր Պ. ՍԻՄԵՐՆԵՆՍԻՅ. Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵՆՍԻՅ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգեւոր Գարանոցի Հոգաբարձութեան խորհրդարանում հոգեւորներ ամիսը 17-ին, երեկոյեան 8 ժամին կը լինի երկրորդ անգամ աճառող (առանց կրկնաձգելի) կապալով տալու դպրանոցի պատկանեալ 21 կ ր պ ա կ ն ե թ' տախտակաշէն դարբնոցի, որոնք գտնվում են Ներսիսեան հին դպրանոցի հանդէպ: Պայմանագրով լը կարելի է կարգաւ հոգաբարձական զեւանտան մէջ ամեն օր բացի կիւրակէից և տօներից առաւօտեան 10 ժամից ց12 միջօրէի:

ՅԱՅՏՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱԷՑԵԱՏԻ (Վապիտան Պետրոս Մաղաթեանց) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ընտիր թըղ:

Թի վերայ մարդու ուղուած I, II և III մասերը միասին լոյս տեսաւ և արդէն վաճառվում է Բաղվում իմ սկզբական տպարանում և Թիֆլիզի գրաքանդաւանոցներում. գինն է 1 ա. 20 կ.:

Յանկացողները կարող են գիմել հետեւալ հասցէով. — Въ Баку въ Типографіи Александра Гасабова.

1—30

ՄՈՂՆԻՑՑ ԵՎԵՂԵՑԻՑՑ ՄՕՏ ԵՐԿՈՒ ՓՈՔՐ ՏՆԵՐ Համարաւ 3 և 5 ՏՐՈՒՈՒՄ ԵՆ ՎԱՐՁՈՒ

Այն պայմանաւ, որ նորանց նորոգութիւնն և կարկառանքն յանձն առնէ վարձողը: Գիմել երեսփոխանի Մոլնայ սուրբ Գէորգ եկեղեցւոյ Թիֆլիսում:

(1—3)

Կովկասեան գրաքանդաւանոցի Գ. Գրիգորեանցի հրատարակութեամբ Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի Ը ն դ չ ա ն ու ը Ր ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ Գ Ա Ս Ա Գ Ի Ր Ք Հայոց դպրոցների համար մասն ուսումնական և բնական (առաջին շրջան) 40 պատկերներով Աշխատասիրեց Աղէք. Սիմոնեայ:

(10 — 1)

Մի հայ երիտասարդ, որ նոր է աւարտել իւր ուսման ընթացքը Ներգրանցում՝ պ ա ա Ր ա ս ու լ մ է ԱՇԽԱՐՀԱՐՑՆԵՐ և ԱՇԽԱՐՀԱՐՑՈՒՄԻ Հայոց բոլոր ուսումնարանների համար:

Յանձն է առնում նաեւ ընտանեկաներում և երկխայոց դատարարակի պաշտօն:

Հասցեն. Ներս. ուսումնարան — Գարուժիկ Մարաշեան: Կամ ուղղակի Могинская улица, домъ Джаваховыхъ № 9. Арутюны Мараганцы.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ՎԱՐՁԱՐԱՆԻ» № 7, 8, 9 և 10 հետեւալ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԻ.

«Վարժարանի» վերջնական դադարումը. — Խմբագրութեան կողմից: — Մեր դպրոցական զեկափորների դարձուներթիւնն առթիւ. — Խմբագրութեանց կողմից: — Քաղաքական եւրօպան. ֆիդելիտան աշխարհագրութեան գործադրութիւնը պատմութեան և քաղաքագիտութեան ուսումնասիրութեան մէջ: — Հետազոտութիւն իւրօրինակ — Գրպերծի. Ս Պալատանեան: — Մօլնէր իրեւ երգիծարան և մարդ. — Թարգ. — Փ. Վարդանեան: — Մանկական պարտեզները Միացեալ-Նահանգներում: — Ս. Պալատանեան: — Կնոջ կոչումը և դաստիարակութիւնը. — Լուիզա Բիւխնէրի. — Թարգ. Գ. Շահուդարեան. — Ոսկէ ձիւնի. — բանաստեղծութիւն. — Ա. Ս. Պալատանեան. — Թարգ. Գաւառ. — Գաղթիկ: — Բանասիրական հոգեբանութեան նշանակութիւնը կրթութեան գործում: — Մոսկովի բէլիքաւից քաղաւածք: — Թարգ. Գ. Շահուդարեան: — Տէլլուրիամբ գործածութիւնը ֆիդելիտան աշխարհագրութեան ժամանակ. — Լ. օրգ. — այլ և այլք: — Յայտարարութիւններ:

Խմբագիր — Հրատարակիչ Ն. Խոսրովեան.

Մ ա մ ու լ ի տ ա կ ի ց դ ու ը ս ե կ աւ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ՀԱՅՈՑ Ի Պ Է Տ Ս Ն Ո Ր Ա Վ Ա Ր Ժ Ի Ց (Ամբողջ քերականութիւնն) Ե Ր Կ ա ս ի Ր ու լ թ իւ ն Հ. Ղ Ո Ւ Կ Ա Ս Ն Ա Ն Ց. Գ Ի Ն Ն Է 50 Կ Օ Պ Է Կ Գրամարով գնողներին զեղուան կը լինի. — Մախվում է: Կենդրոնական գրաքանդաւանոցում:

8—10

ԹԻՖԼԻՍԻ ԲՈՂՈՐ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ ՄՕՏ ԾԱԽՎՈՒՄ Է Աւ ե տ ի ք Տ է ր-Յ ա կ ո վ ք ե ա ն ց ի «ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ» Զ ե ո Ն Ա Ր Կ Ը. — Գ Ի Ն Ն Է 60 Կ Օ Պ Է Կ: Նկատող. Կովկասի նահանգների մեծութիւն յոյց տուող թուերի մօտ գրած միջոց բառը պէտք է կարգաւ վերստ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ ՀԱՅԿՈՒՆՈՒ «ԲԱՅԱՅԻԻ ԿԱՅԾԵՐԸ» Վերնագրով մասնաւորութիւնը: Հրատարակութիւն Սէյեալ Ամիրանցի: Գինն է 80 կօպ. Մախվում է Թիֆլիսում Կենդրոնական և Կովկասեան գրաքանդաւանոցներում: Վեղուի խմբագրատանը և Շահվերդիանի Պալիկոնում: Բազումում Շիրազեանցի խանութում և հրատարակչի մօտ հետեւալ հասցէով. — Баку, Сеяду Михайловичу Амрянцу. Գ ու լ մ ա Ր ո վ զնաղներին Մ Ե Ս զեղուան կը լինի:

(20—6)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ «ՏԱՐԱԿԱՆ ԵՐԿՐԱԶՍ. ՓՈՒԹԻՒՆ» Մ ա ս ն տ ա ա ջ ի ն Պ լ ա ն ի մ լ փ Ր ի ա.

Հեղինակութիւն Մօսկովայի Կայսերական Համալսարանի պրօֆէսոր Ա. Գալիլոյի թարգմանութիւն երկրաչափ վախտանգ Հասան-Ջալալեանցի: Մախվում է Տիֆլիսում բոլոր հայ-գրաքանդաւանների մօտ և թարգմանչի մօտ. հետեւալ հասցէով. — Въ Тифлисе, Штабъ—Кавк. Воен. Округа Поручику Гасанъ—Джалалянцу.

«Ա Ղ Բ Ի Ի Ր» Լոյս տեսաւ № 10 (հոկտեմբերի) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ № 10

Ոսկու աղբիւր (Ռոստաւոր) Սրինգ. — Հօկայ միջին (Հարունակութիւն և վերջ) Տ. Գիւլալեանց. — Ֆրիդլանդ (Հայնէից բանաստեղծութիւն) Բալիշի. — Փրիդլանդ (Հարունակութիւն և վերջ) Բալիշի:

ԳԻՏԱՌԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ. Կենդանիների լեզուն փոխադր. Լեւոն Մ. — Ա.:

ՀԵՏԱԲԻՐԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ. Այս տարուայ անձեւային լինելու պատճառ. — Զորք Գարովինի հետախուզութիւնը մարդու շրջանաձե թափառելու մասին:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ.Գ. Զարթուրել. — Մի լաւ դաս: ԶՈՒՄԱՆԱԼԻ. Հանկուկներ (7 հատ). — Թուա-

բանական խնդիր. — Թուադրի. — Անկողս: — Երգ նոսաներով (Երբ որ լեզուն բացուեցաւ): — Նախընթաց № № 8—9-ի մէջ կը լաւ հանդիսների բացատրութիւնը:

Ալէքսանդրօպօլս Հայոց Վիճակային հոգեւոր դպրոցի II, III և IV դ ա ս ա տ ա ն ց համար հարկաւոր է հայոց լեզուի և հայոց պատմութեան ՈՒՍՈՒՑԻՉ, որ ունենալու է շարաթական 20 դ ա ս: Յանկացողները կարող են գիմել նոյն զրպրոցի հոգաբարձութեան և առաջարկել իրանց պայմանները հետեւեալ հասցէով. — Попечительству Александровскаго Армянскаго Духовнаго училища.

ՀԱՅՈՑ ԳՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ընդհանուր ժողովը սեպտեմբերի 30-ի նիստում նշանակեց երկրորդ ընդհանուր ժողով հոկտեմբերի 7-ին, կիւրակի առաւօտեան 11 ժամին Արհեստաւորաց կուրբի դահլիճումը (Վիլիամովսկի փողոց, տուն իշխ. Ամատունու) առաջարկած հարցերին վերջնական վճիռ տալու համար: